

նեպիդմի պաշտպանության ու արմատավորման գործում սփյուռքահայ նոր գրականությանը, մասնավորապես, գրողների նոր սերնդի մեջ: «Անի»-ն չենք բնդունելություն գտավ թե՛ սփյուռքահայ և թե՛ սովետահայ բնթերցողների շրջանում և իր որոշակի հետքը թողեց հայ գրական մամուլի պատմության մեջ:

Ի. ԲԱՔԻՈՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԷՍ ԱՍՏՐԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԿՐԷԻ

Աստրախանի հայկական Դատաստանագրքի ուսումնասիրությունը Հնարավորություն է տալիս մեզ պարզ պատկերացում կազմելու հայկական գաղութներում ստեղծված դատական օրգանների գործունեության ու դատավարության ամբողջ ընթացքի մասին: Դատաստանագրքից պարզ երևում է, որ հայկական գաղութներում դատական ամբողջ գործը գտնվել է դատարանի ձեռքին, պաշտոնական դատավորներից բացի ուրիշ ոչ ոք իրավունք չուներ դատ վարելու:

Դատավարությունը կարգավորող հոդվածների ուսումնասիրությունից երևում է, որ այն իր մեջ ընդգրկում էր հետևյալ տարրերը.

1. Կողմերի, այսինքն ըստ Դատաստանագրքի՝ դատախազի և պատասխանողի ներկայության անհրաժեշտությունը:

2. Դատավարության բուն պրոցեսը, այսինքն «ապացուցութիւն բանից», ինչպես դատախազի, այնպես էլ պատասխանողի համար:

3. Վճռի կայացումը, կամ ինչպես Դատաստանագրքում է ասված՝ «կարգաւորութիւն դատաւորաց և լուծումն դատաւտանական արարեալ այնի աղագաւ» (Դատաստանագիրք, մասն. Ե, գլ. 1-ին, հոդ. 2):

Այժմ սրանցից յուրաքանչյուրը քննենք առանձին-առանձին:

Համաձայն Աստրախանի հայոց Դատաստանագրքի, կողմերը կոչվում են գատախազ և պատասխանող: Դատախազը, ներկա իմաստով, հալցվորն է, իսկ պատասխանողը՝ ամբաստանյալը: Դատաստանագրքի այս հոդվածի վրա զդացվում է սուսական իրավունքի որոշակի ազդեցությունը: Կողմերը (Истец и Ответчик) այդպես էին կոչվում նաև Ալեքսեյ Միխայլովիչ ցարի (1645—1676) 1649 թ. հրատարակած օրենքների ժողովածուի մեջ: Համանման ձևով են ընդգրկված կողմերը նաև 1716 թ. մարտի 30-ի օրենքում¹:

Համաձայն Դատաստանագրքի, դատախազ չէին կարող լինել որդիները ծնողների դեմ և հակառակը, ծառաները տիրերի դեմ, անգամ ծառայական վիճակից ազատվելուց հետո էլ, կինը ամուսնու դեմ և հակառակը, բացառությամբ անբարոյականությանը վերաբերող մեղքի: Սակայն քրեական այնպիսի հանցանքների դեպքում, երբ դրանք ուղղված են արքայի և աստծո դեմ, վերոհիշյալները կարող էին լինել դատախազ:

Բյուզանդական օրենսդրության մեջ նույնպես ասված է, որ «ծնաւոր և որդիք գոր ինչ ի վերայ միմեանց ասեն մի՛ ընկալչուք և մի՛ զոր տէրանց ծառայ կամ անազատ վկայեսցէ»: Սովորաբար երբ խնդիրը բարդ չէր լինում, դատախազը ատյանում բանավոր կերպով հայտնում էր այն պատասխանողին, սպասում նրա պատասխանին և դատարանի վճռին (մասն. Ե, գլ. 2-րդ, հոդ. 3): Պատասխանողը դատարանում լսում էր դատախազի հայցը և տալիս իր բացատրությունը (մասն. Ե, գլ. 3-րդ, հոդ. 1): Եթե պատասխանողը պարզ կերպով չէր բացատրում դատախազի պահանջը, ապա վերջինս պատասխանողի խնդրանքով և դատավորների հրա-

¹ Շարադրանքի ընթացքում առանձին հարցերի մասին խոսելիս զուգահեռ ենք անցկացրել Աստրախանի և Դոնի դատաստանագրքերի, ինչպես նաև Յամանակին Թուսաստանում գործող օրենքների և Բյուզանդական օրենսդրության միջև, ցույց տվել Աստրախանի դատաստանագրքի կրած ազդեցությունն ու ինքնությունը:

² М. Н. Тихомиров, II. II. Епифанов, Соборное уложение 1649 г., М., 1961, գլ. X, հոդ. 3, 4, 103, 105, 108, 109, 114, 115, 118, 119 և այլն:

³ «Свод законов Российской империи», 1857, т. X, ч. II, № 160.

⁴ Մատենադարան, ձեռ. № 778, թղթ. 343ա, հոդ. II, ձեռ. № 8926, թղթ. 331, հոդ. II, և նաև «Соборное уложение 1649 г.», гл. 22, ст. 6, гл. II, ст. 13, СЗР, 1857, т. X, ч. II, № 175.

մանով պարտավոր էր իր պահանջը, կամ ինչպես Դատաստանագրքում է ասված՝ արդան, ներկայացնել գրավոր:

Պատասխան արդա գրելու համար տրվում էր 10 օր ժամանակ: Եթե պատասխանողը դատախազի արգային պատասխանելու համար տրված ժամանակամիջոցում հիմանդանար և հիմանդություններ երկարեր, նա պարտավոր էր իրեն փոխանորդ նշանակել, որպեսզի վերջինս հանդես գար դատարանում իր անունից (նույն տեղում, հոդ. 2): Փոխանորդ չլին կարող լինել հրապարակով պատժվածները, հայտնի ստախոսները, ծառաները, 25 տարին չլրացած երիտասարդները և անգրագետները (մասն Գ, գլ. 5, հոդ. 3): Բացի դրանից, Դատաստանագրքից երկվում է նաև, որ եթե բոլորը չէ որ կարող էին փոխանորդ լինել, ապա բոլորը, մանավանդ կանայք, կարող էին փոխանորդ ունենալ: Սակայն Դատաստանագրքում ասված է, որ եթե գործը հասնում է երդումին կամ կոնկրետ պատժին՝ ծեծին, փոխանորդն արդեն չի կարող հանդես գալ. այդպիսի դեպքում պարտ է որ անձամբ անձին մտանել ի դատաստան և ոչ փոխանորդիս (մասն Գ, գլ. 5, հոդ. 4): Համաձայն ռուսական իրավունքի, նա, ով կարող է օրենքով լինել հայցվոր և պատասխանող, կարող է ունենալ և փոխանորդ՝ հավատարմատար⁵, որը պետք է ունենա լիազորագիր, այսպես կոչված հավատարմություն համակ (1722 թ. նոյեմբերի հրամանագիր)⁶: Հետաքրքիր է, որ Գուշը չի բնութագրում փոխանորդի ներկայությունը⁷, հնարավոր համարելով, որ հավատարմատարը կարող է լինել զգալի մասնաճիւղի ճարտասան մարդս և ուսուցիչը⁸ հաղթանակ կտանի հակառակորդի դեմ: Գուշը բացառություն է անում միայն հոգևորականների նկատմամբ, թույլատրելով, որպեսզի նրանք դատարան ուղարկեն իրենց ներկայացուցչին՝ փոխանորդին: Ինչպես և ժամանակին նկատել է Վ. Բաստամյանցը, Գուշը դրանով ցանկացել է հոգևորականներին ազատել երդում տալուց:

Գաղութահայության աչքում հայկական դատարանի գերն ու նշանակությունն ավելի բարձրացնելու նպատակով Աստրախանի հայոց Դատաստանագրքի հեղինակները հատուկ հոգևած են ձեռնարկել, ըստ որի ոչ ոք, անկախ կացությունից և գրաված դիրքից, իրավունք չունի առանց իր ազգային դատարանին դիմելու որևիցե հարցով դիմել մեկ ուրիշ իրավաբանի կամ գլխավոր դատարանին: Ելիավոր կամ «վեհագոյն» դատարանին դիմելու իրավունք էր տրվում միայն այն ժամանակ, երբ ազգային դատարանը կատարում էր «անիրաւութիւն» (մասն Ա, գլ. 23, հոդ. 2): Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ «վեհագոյն» դատարանը գաղութահայերից իրեն ուղղված բողոքագրերը մեծ մասամբ հետ է ուղարկել նորից հայկական ռատահուգի (իրավաբանի) քննությանը⁹: Դատաստանագրքում ասված է, որ պատասխանողը դատախազին վճարում է ոչ թե այնքան, որքան նա իր արգայում նշել է, այլ այնքան, որքան դատարանը քննությանը հաստատում է (նույն տեղում, հոդ. 11): Կնճռոտ հարցերը վճռելու համար դատախազը և պատասխանողը պարտավոր էին վճարել «մարս» հետևյալ կերպ. պատասխանողը պարտավոր էր արքունի գանձարանը մուծել 1/10-ը այն գումարի, որը դատավճռի համաձայն պետք է վճարեր դատախազին, իսկ դատախազը որպես «մարս» արքունի գանձարանն էր մուծում այն գումարի 1/10-ը, որը նա չի կարողացել ապացուցել և հաստատել պատասխանողի վրա (նույն տեղում, հոդ. 12)¹⁰:

Ինչպես տեսնում ենք, սա մի միջոց էր, ինչպես ոչ այնքան զուլեղ, որը մասամբ կստիպեր բողոքող կողմին ճիշտ պահանջ ներկայացնել: Ըստ Դատաստանագրքի, եթե մեկը ամբաստանագիր է գրում, սակայն չի կարողանում հաստատել իր դրածները, ապա այն պատիժը, որ պետք է կրեր պատասխանողը ամբաստանագիրը հաստատվելու դեպքում, տրվում էր նրան (նույն տեղում, հոդ. 24): Այս հոդվածի վրա ակնհայտ է բյուզանդական իրավունքի ազդեցու-

⁵ М. Н. Тихомиров, П. П. Епифанов, Соборное уложение 1649 г., М., 1961, гл. X, ст. 108, 109, 114, 115, 118, 149, 156, 157, 185 (այսուհետ՝ Уложение 1649 г.).

⁶ СЗР, 1857, т. X, ч. II, № 186, տես նաև №№ 188, 192, 193.

⁷ «Արխիվային Գուշի Դատաստանագրքի հայոց», Վաղարշապատ, 1880, Նախադրություն, էջ 29:

⁸ Նույն տեղում, էջ 35:

⁹ Государственный архив Астраханской области, ф. 394, оп. I, л. 2 1157, лл. 125—128, л. 1585, лл. 106—109 (այսուհետ՝ ГААО):

¹⁰ Այս հոդվածի վրա որոշակի կերպով զգացվում է Հուստինիանոսի Կոդեքսի 7-րդ գրքի 6-րդ գլխի հինգերորդ հոդվածի ազդեցությունը: Տես «Corpus iuris civilis», Berlin, 1959, հատ. 2, էջ 317:

թյունը Այնտոկ ևս «վայրապար... բամբասող»-ների, այսինքն զրպարտիչների համար նախատեսված է նույնպիսի պատիժ¹¹։

Համաձայն Դատաստանագրքի, որն է հարցով դատարան գիմելու համար բացառությամբ թեթև ու հասկանալի գործերի, պետք է հայցվորը իր ստորագրությամբ ներկայացնեք գրավոր խնդրագիր։ Տրված են խնդրագրի կամ ինչպես Դատաստանագրքում է ասված՝ արդայի¹² ընդունումը և հետևյալ ձևերը՝

1. Արդա պահանջողական, «որով որ խնդրէ զիրաւունս ի վերայ ումեք ըստ օրինաց»։ 2. Արդա պատասխանական։ Սա դատախազի արդայի պատասխանն է գրված պատասխանողի կողմից։ 3. Արդա բացահայտական։ 4. Արդա հաշտության, երբ մեկը բողոքում է դատարանին, սակայն մինչև գործի քննությունը հաշտվում է հակառակորդի հետ, նման դեպքում կողմերը պարտավոր էին հաշտության արդա ներկայացնել դատարանին, որպեսզի վերջինս տեղյակ լինի այդ մասին։ 5. Արդա ամբաստանական։ Սա արդայի այն ձևն է, որով մեկը դատարանին հայտնում է մեկ ուրիշի մի այնպիսի գործություն կատարելը, որը արգելված է օրենքով (մասն Գ, գլ. 5, հոդ. 6)։ Աստիճականի մարդային արխիվի զանազան ֆոնդերում և առանձնապես հայկական ռատհաուզի (իրավարանի) ֆոնդում կան արդայի վերոհիշյալ ձևերից բազմաթիվ օրինակներ¹³։

Պատասխանողը իր արդայում պարտավոր էր գրել միայն այն խնդիրների մասին, ինչ առաջադրված էր դատախազի արդայում։ Եթե դատախազը կամ պատասխանողը արդայում նշում են, որ իրենց առաջադրած խնդիրների հաստատման համար ունեն համապատասխան դրություն կամ դրություններ, պարտավոր էին արդայի հետ միասին նրանց բնագրերը կամ ստույգ պատճենները ներկայացնել դատարան։ Հանրային գեպրում արդան չէր ընդունվում (մասն Գ, գլ. 6, հոդ. 7 և 8)։ Ըստ Դատաստանագրքի, արդայի մեջ նշվող թվերը (դրամագլխի քանակ, տարեթիվ և այլն) պետք էր գրել անպայման բառերով, որպեսզի հնարավոր չլինեք փոխել դրանք (նույն տեղում, հոդ. 5)։

Արխիվներում պահպանված բոլոր արդաներում էլ որոշակի կերպով ասված է, թե ո՞ւմ (այսինքն՝ ո՞ր իրավարանին) է ուղղված արդան, ո՞վ է գրողը, ե՞րբ և որտեղ է գրված, ինչի մասին է այն, ում է վերաբերում գործը և այլն¹⁴։ Դատաստանագրքում տրված են պատասխանողի կողմից դատախազի առաջադրած խնդիրներին պատասխանելու հնարավոր երեք ձևերը։

1. Երբ պատասխանողը լիովին ընդունում է դատախազի առաջադրած խնդիրները։ Դրանից հետո այլևս ուրիշ ապացույցների կարիք չէր զգացվում, մնում էր կայացնել վճիռը։

2. Երբ պատասխանողը հրաժարվում է դատախազի առաջադրած բոլոր խնդիրներից և չի ընդունում դրանք։

3. Երբ պատասխանողը հանձն է առնում զանցանքը, բայց ոչ այնպես, ինչպես առաջադրել էր դատախազը, այլ ուրիշ կերպ։

Դատաստանագրքում մեծ տեղ է տրված ապացուցային իրավունքին։ Ինչպես դատախազը, այնպես էլ պատասխանողը պետք է իրենց ասածները հիմնավորեն, ապացուցեն ուրիշների վկայությամբ (մասն Գ, գլ. 8, հոդ. 1)։ Սակայն առաջին հերթին դատախազը պետք է աստատեր իր մեղադրանքը, ապացուցեր իր իրավացիությունը։

Համաձայն Դատաստանագրքի, գործի ապացուցումը կարող է լինել չորս ձևով։

1. Խոստովանությամբ, 2. վկաների ցուցմունքներով, 3. գրավոր փաստաթղթերով, և 4. երդմամբ։

¹¹ Մատենադարան, ձեռ. № 778, թղթ. 351ր, հ. ՄԱ, թղ. 311ր, հ. ԺԸ, թղ. 318ր, հ. ԾԺԵ։ Զեռ. № 8926, թղ. 332ա, հոդ. ԾԸ, թղ. 332բ, հ. ԾԺԵ։

¹² Արզր, արդա՝ տաճկերեն բառացի նշանակում է իվձ, բաղձանք, փափագ, ցանկություն, տենչ («Համառոտ բառարան ի տաճկական է ի հայ», Ի. Հ. Յակովբոս վ. Պոզաբեան, հատոր 2, Վիեննա, 1841, էջ 44։ Տե՛ս նաև «Բառարան պարսկերէն» ի Դէորգեայ դպրէ Յովհաննէսեան Պալատցոյ ի Կոստանդնուպօլիս, 1826)։ Սա. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում նշվում է խնդրագիր և ընդորագիր իմաստը։

¹³ Государственный архив Астраханской области, ф. Астраханский армянский суд, 394 оп. 1, л. 2413, л. 68, ф. ААС № 415, оп. 1, л. 2, л. 34 (այսուհետև՝ ГААО ф. ААС)։

¹⁴ ГААО ф. ААС, № 115, оп. 2, л. 16, л. 1, оп. 1, л. 2, л. 34, 43, ГААО ф. ААС № 394, оп. 1, л. 2413, лл. 9, 43, 47, 68, 69, 92, 93, и. т. л.։

Ըստ Գոշի, ապացույցները կարող են լինել երեք ձևի. 1. սեփական խոստովանություն, 2. վկաների ցուցմունքներ և 3. երդում: Գոշի մոտ բացակայում է Աստրախանի Դատաստանագրքում եղած գրավոր փաստաթղթերով ապացուցելու ձևը:

Ռուսական օրենսդրության մեջ ընդունված էր ապացույցների 7 եղանակ.

1. Ինքնախոստովանություն, 2. գրավոր ապացույցներ-ակտեր, 3. անձնական քննություն, զննում, 4. իրազեկ, գիտակ մարդկանց ցուցմունքներ, 5. վկաների ցուցմունքներ, 6. ընդհանուր խուզարկություն, 7. երդում¹⁵:

Ըստ Դատաստանագրքի, «Վկայ անուանի նա, որ վկայ է վասն ումեք գոյ նա ճշմարիտ և արդար ի բանս և ի յառաջադրութիւնս իւր...» (մասն Գ, գլ. 10, հոդ. 1):

Համաձայն Դատաստանագրքի, բոլորը չէ, որ վկայելու իրավունք ունենան վկաներ չլին կարող լինել հրապարակով պատժվածները, եկեղեցու կողմից նզովվածներն ու բանադրվածները, կանայք, ծառաներն ու սպասավորները, քսան տարին չլրացածները, թշնամիներն ու նախանձավորները, գողերը, մարդասպանները, գործը ոչ հավաստի խմացողները: Չէր ընդունվում նաև որդիների վկայությունը ընդդեմ ծնողների և ծնողների վկայությունը որդիների համար, տղամարդկանց վկայությունը իրենց կանանց համար, ազգականների և ընտանիքի անդամների վկայությունը, դատախազի վկայությունը, պարտատերերի ու պարտապանների և ընդհակառակը՝ պարտապանների ու պարտատերերի միմյանց համար տրվող վկայությունները, դատավորների վկայությունն այն գործի կապակցությամբ, որը քննում են իրենք (մասն Գ, գլ. 10, հոդ. 3):

Այժմ համեմատենք վկայի նկատմամբ Աստրախանի Դատաստանագրքի ունեցած այսքան մանրամասն պահանջները (17 կետ) Գոշի Դատաստանագրքի հետ: Ինչպես նշեցինք վերևում, Գոշը ապացույցների հիմնական ձևերից մեկը համարում է վկաների ցուցմունքները: Այդ պատճառով էլ նա ևս հանգամանորեն (իհարկե ոչ այնքան մանրակրկիտ, ինչպես Աստրախանի Դատաստանագիրքը) նշում է այն հատկանիշները, որոնցով պետք է օժտված լինեն վկաները: Ըստ Գոշի՝ վկաները պետք է լինեն բարի, ճշմարտախոս, անկաշառ և ազնիվ մարդիկ:

Նա չէր ընդունում մաքսավորների, արևելացիների, ոչ քրիստոնյաների ու հերետիկոսների և «ամենայն մեղաւորներին» վկայությունները¹⁶: Իսկ ազգականների վկայությունը ընդունում է այն դեպքում, երբ «վարքն նոցա ամենեցուն յայտնի իցէ թէ հաւատարիմք են»¹⁷:

Խոսելով վկաների տարիքի մասին, Գոշը պահանջում է, որ վկաները լինեն չափահաս, «հասակաւ կատարեալք» կամ «ալեօք պատուեալ», որով առաւել երեւի պատիւ նոցա»¹⁸: Գոշը կատարյալ հասակ է համարում 25 տարին և պահանջում է, որ վկան թրսանեւհինգ ամացն լիցի», բացառությամբ առևտրական գործերում ծաղած վեճերի, որում թույլատրում է ընդունել որդեծնություն հասակ ունեցողի՝ 14 տարեկանի վկայությունը¹⁹: Բացի դրանից, այն դեպքերում, երբ կատարյալ հասակ ունեցող վկաների թիվը պակասում է, Գոշը թույլատրում է այն լրացնել անչափահասների (այսինքն 25 տարին չլրացածների) ցուցմունքներով, միայն վկաներից մեկը պետք է անպայման չափահաս լինի: Ի տարբերություն Գոշի, որը չի ընդունում ոչ քրիստոնյայի վկայությունը, Աստրախանի Դատաստանագիրքը ընդունում է «անհաւատ»-ների վկայությունը, միայն վկաների թիվը հավասար լինելու դեպքում առավելությունը տալիս է հավատացյալներին (մասն Գ, գլ. 10, հոդ. 10):

Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը ընդունելի է համարում մեկից ավելի վկաների տված ցուցմունքները, իսկ մեկի վկայությունը ընդունելի է համարում միայն այն դեպքում, երբ այն հաճությամբ ընդունում են և՛ դատախազը, և՛ պատասխանողը (մասն Գ, գլ. 10, հոդ. 5): Գոշը նույնպես գտնում է, որ վկաների թիվը պետք է լինի 2—3 հոգուց ոչ պակաս, սակայն նա ոչ մի բացառություն չի անում և գտնում է, որ մեկ վկայի ցուցմունքները չպետք է հիմք ընդունել, թեկուզ և այն լինի ճշմարիտ. «Եւ թէպէտ եւ միոյ վկայի հավատարմի ճշմարիտ է վկայութիւնն, բայց ոչ հաստատ»²⁰, Գոշի կարծիքով մեկ վկայի համար հեշտ է «վասն

¹⁵ СЗР. 1857, т. X, ч. 2. № 314.

¹⁶ «Խիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», Նախադրութիւն, էջ 37, 40, 55:

¹⁷ Նույն տեղում, էջ 37:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 39:

²⁰ Նույն տեղում, էջ 44:

ախտի ինչ շարախօսել, բայց երկուցն կամ երեցն ոչ էլ այնպես դիրքին²¹։ Ինչպես տեսանք, Աստրախանի Դատաստանագրքով կանայք ընդունվին զրկված են վկայելու իրավունքից։ Դոշը նույնպես գտնում է, որ «կանայս ոչ էլ պարտ ընդունել վկայս»²²։ Սակայն այնպիսի դեպքերում, երբ գործին ականատես կամ տեղյակ են եղել միայն կանայք, ընդունում է նրանց վկայությունը, պահանջելով, որ վկաների թիվը լինի կրկնակի՝ 4—6։ Ըստ Դոշի պետք է ընդունել նաև կանանց վկայությունն ի վերայ կանանց²³։

Համեմատելով Աստրախանի հայկական Դատաստանագրքի վկայի մասին եղած հոդվածները (ինչպես նաև ուրիշ բաժինների գանապան հոդվածներ) ուսումնական օրենքների ժողովածուների հետ, պարզ կերպով պայմանավորվում է, որ նրա չեղնակաները քաջ ծանոթ են եղել այդ օրենքներին, օգտվել են նրանցից և կրել նրանց ազդեցությունը։

Սակայն նրանք ոչ թե կուրորեն հետևել են այս կամ այն օրենքին, ոչ թե առանձին հոդվածներ սոսկ թարգմանել են հայերենի, այլ վերափոխել են, խմբագրել իրենց սովորույթներին և Հայկական Դատաստանագրքի ընդհանուր ոգուն²⁴։

Ինչպես տեսանք վերևում, Դատաստանագիրքը հատուկ հոդվածով նշում է, թե ովքեր չեն կարող լինել վկաներ և որ քաղաքացիների վկայությունը չպետք է ընդունել (հոդ. 3)։ Թվում է, թե այդ հոդվածում թվարկված քաղաքացիներից քացի հասարակության մյուս խավերի բոլոր անդամների վկայությունները պետք է դիտվեն հավասար։ Սակայն այդպես չէ։ Դատաստանագիրքը տարբերություն է դնում ունեւոր և չունեւոր, հոգեւոր և աշխարհիկ, գիտուն և անգիտ, անվորությունների միջև, առաջնությունը տալով ունեւորներին, հոգեւորականներին և գիտուններին²⁵։ Նախքան վկայություն տալը վկան պետք է խաչի և ավետարանի վրա երգվեր, որ ինքը ասելու է ճշմարիտը, այն, ինչ տեսել է և լսել, առանց ավելացնելու ու պակասեցնելու, անկաշառ կերպով, հաշվի չառնելով բարեկամությունն ու թշնամությունը (հոդ. 13)։

Վկան կարող է իր վկայությունը, ցուցմունքը տալ առանց երդման, եթե դատախազը և պատասխանողը համաձայն են դրան և այդ մասին գրավոր հայտնում են դատավորներին։ Իսկ ըստ ուսումնական օրենսդրության, կողմերը (հայցվորը և պատասխանողը) կարող լին վկային ազատել երդումից միմիայն դատավորների համաձայնության դեպքում (1716 թ. մարտի 30-ի և 1753 թվականի հուլիսի 30-ի օրենքները)։

Սուտ վկայության համար վկան ենթարկվում էր խառագոյն ծեծի և տուժած անձնավորությանը կրկնակի վճարում այն վնասը, որը կրել էր նա իր վկայության պատճառով (մասն Գ, գլ. 10, հոդ. 15)²⁶։ Եթե վկան ցուցմունքը տալիս է ճշտորեն, բայց իր վկայության համար կաշառք է վերցնում այն անձնավորությունից, որին վերաբերում է գործը, ապա պարզվելուց հետո վկան պարտավոր է նրան վերադարձնել կաշառքը կրկնակի չափով (հոդ. 15)²⁷։ Դատաստանագրքում չի ասված, թե ի՞նչ պետք է անել վկայի դեմ կողմերից մեկի առարկության դեպքում, չի ասված թե սկզբում որ կողմի վկային պետք է հարցաքննել՝ դատախազի, թե պատասխանողի, թե վկան որտե՞ղ է երդվում և ովքե՞ր են ներկա լինում, կողմերի ներկայությունը պարտադիր է թե ոչ և այլն։

Դատաստանագիրքը կարևոր տեղ է տալիս նաև գրավոր ապացույցին։ Որպես գրավոր ապացույց թույլատրվում է վկայակոչել, վկայաբերել վաճառականի հաշվմատյանը, պայմանով, որ վերջինս լինի օրինավոր և կանոնավոր գրված, առանց խառնաշփոթությունների, ժամանակագրական կարգով (մասն Դ, գլ. 11, հոդ. 1, 3)։ Գրավոր ապացույց էր համարվում նաև այն դեպքը, երբ մեկը իր գործի իսկությունը հաստատում էր ուրիշ դատարանների հիշատակարանների միջոցով, որտեղ իրոք այդ մասին գրված է²⁸։ Դատաստանագիրքը նույնիսկ առավելություն տալիս է դատարանի ցուցմունքին։

²¹ Նուն տեղում, էջ 42։

²² Նուն տեղում, էջ 40։

²³ Նուն տեղում, էջ 41։

²⁴ Հմմտ. «Уложение 1649 г.», гл. X, ст. 176, 177, 174, 181: гл. XI, ст. 27, СЗР 1857 г., т. X, ч. II, № 360, 362, 363, 389.

²⁵ Հմմտ. «Уложение 1649 г.», гл. X, ст. 13, СЗР 1857 г., т. X, ч. II, № 405.

²⁶ Այս հոդվածի վրա ակնայտ է Հոստինիանոսի Կոդեքսի 4-րդ գրքի 20-րդ գլխի 13-րդ հոդվածի ազդեցությունը։

²⁷ Հմմտ. «Уложение 1649 г.», гл. X, ст. 161—162, 164—166.

²⁸ Հմմտ. СЗР, 1857, т. X, ч. II, №№ 318, 319, 320, 321, 322.

Դատավարությունն ընթացքում գործի իսկությունը ապացուցելու և ճշմարտությունը բազմաշախտելու համար Դատաստանագիրքը կարևոր տեղ է տալիս նաև երդմանը: Եթե պատասխանողը հրաժարվում էր դատախազի պահանջը կատարելուց, կամ իր վրա չէր վերցնում նրա կողմից հարուցված մեղադրանքը, ապա նա պարտավոր էր ի հաստատումն իր արդարությունը երգվել (հոդ. 2): Երդվելու դեպքում պատասխանողը «եղիցի... ազատ ի պատժոց և ի պարտաւորութենէն...» (հոդ. 4): Դատաստանագիրքը միաժամանակ սահմանափակում էր պատասխանողի իրավունքները երդում տալու հարցում, նշելով, որ պատասխանողից երդում չի ընդունվում, երբ զգացվում է, որ նա անազնիվ է:

Վերոհիշյալ հոդվածներից (մասն Գ, գլ. 12, հոդ. հոդ. 2, 4, 5, 6, 7) միաժամանակ երևում է, որ ըստ Աստրախանի Հայոց Դատաստանագրքի, պետք է երգվեր միայն կողմերից մեկը՝ պատասխանողը, ոչ մի խոսք չկա դատախազի երդման մասին:

Աստրախանի հայկական ուսուցողի (իրավաբանի) ֆունդում եղած նյութերից երևում է, որ մեղադրյալները երդվել են խաչի և ավետարանի վրա մեկ կամ երկու բահնայի ներկայությամբ²⁹: Ռատհուզի կողմից Աստրախանի հայոց հոգևոր առաջնորդ Ստեփանոսին ուղղված գրություններից մեկում կարդում ենք. «Պրեմոմորիա Աստրախանայ հայոց առաջնորդ և արքեպիսկոպոս Ստեփանոսին վասն 2 բահնայ ուղարկելոյ հայոց Ռազգաուզն խաչի և ավետարանա»³⁰, Սուտ երգման համար, երբ այն պարզվում էր, նախատեսված էր հրապարակալիք ծեծ և այն վնասի ամբողջական հատուցումն, որը կրել էր որևէ մեկը սուտ երդման պատճառով (մասն Գ, գլ. 22, հոդ. 8): Գուշր սուտ երդման համար, որպես պատիժ սահմանել է ապաշխարություն՝ երեք տարի, հինգ տարի և ցմահ³¹: Այն դեպքում, երբ մեղադրյալը, հանցագործը չի խոստովանում ճշմարտությունը, Դատաստանագիրքը որպես խոստովանության միջոց նախատեսում էր ծեծ (մասն Գ, գլ. 13, հոդ. 10):

Դատավճիռը, կամ ինչպես Դատաստանագրքում է ասված՝ «կարգաւորութիւնն», պետք է դրոշմված-կնքված լիներ և բոլոր դատավորների (3 հոգի) կողմից ստորագրված: Հետևաբար, որպեսզի դատավճիռը կայացվեր, անհրաժեշտ էր, որ դատավորները լինեին համակարծիք: Տարակարծության դեպքում նրանք պետք է գրեին իրենց կարծիքները և հանձնեին 9-ի խորհրդի անգամներին³²: Վերջիններս քննում էին հարցը և կայացնում վճիռ (հոդ. 2):

Դատավճիռը ստանալուց հետո կողմերից յուրաքանչյուրը, եթե զժգոհ էր նրանից, կարող էր բողոքարկել: Բողոքարկելու համար տրվում էր երեք օր ժամանակ՝ հաշված դատավճիռը ստանալու օրից: Եթե սահմանված ժամանակամիջոցում զժգոհ կողմը բողոքական արգա չներկայացներ դատարանին և 9-ի խորհրդին, նա զրկվում էր բողոքարկելու իրավունքից: Գանգատագիրը ստանալուց հետո գործը վերանայելու համար դատավորները պարտավոր էին երկու շաբաթվա ընթացքում հրավիրել 9-ի խորհրդի անգամներին և նորից քննել գործը:

Նման դեպքերի մենք հանդիպում ենք Աստրախանի մարզային արխիվի նյութերում: Այսպես, հայկական ուսուցողի 1763 թ. մայիսի 23-ի արձանագրությունում, որը վերաբերում է քաղաքացի Դարյա Ներսեսովնայի դժբախտությանը, ասված է. «Թիւն 1763 մայիսի 23: Աստրախանայ հայոց ռազայուզուն ժողովեցեալ եղաք մենք ներքոյ դրեալք Աստրախանայ մեշչանիքս վասն վերահասու լինելոյ թիւն 1754 և 1755 էն հայոց ռազայուզու եղեալ դադավոր Աստրախանայ մեշչանին Բարթոլոմէոս դի տէր Օսկանին և իր ընդերանոց բանլրին ըստ լեզուավ խնդրոք Աստրախանայ մեշչանին հանգուցեալ Բայրամ դի Նազարին կողակից այրի Դարեւան դի Ներսեսին...»³³:

Նույն գործում հանդիպում ենք Դ. Ներսեսովնայի խնդրագրերին (զտնագան ժամանակներում ուսուցողին գրած բողոքական ու պատասխանական արգաների) ուղղված հայկական ուսուցողին, որոնցից երևում է, որ նա զժգոհ է մնացել ուսուցողի վճռից և պահանջում է վերանայել գործը:

²⁹ Երդման այդ ձևը գալիս է Բյուզանդիայից: Տե՛ս «Corpus iuris civilis», հատ. III, Novella Berlin, 1959, № 124.

³⁰ ГААО, ф. ААС, № 415, оп. 2, л. 10, л. 1.

³¹ «Աթիթարայ Գուշի Դատաստանագիրք հայոց», էջ 57—58:

³² Ինչի խորհուրդն ունեւ բարձրագույն աստյանի ֆունկցիա:

³³ ГААО, ф. 394, оп. 1, л. 2413, л. 78.

Դատաստանագրքում խոսվում է նաև դատավարության մեկ այլ ձևի մասին, երբ գործը քննելու համար դատավորներ կամ, ինչպես Դատաստանագրքում է ասված՝ «վճռահատներ» են ընարում կողմերը կամ նշանակում են դատավորները: Դատավարության այս ձևը իր ընույթով մոտ էր ժամանակին Ռուսաստանում գործող третейский суд-ին: Եթե վճռահատների կայացրած վճռից կողմերը սկզբում գոհ են լինում, բայց հետագայում պարտավորյալ կողմը բողոքում է դատավորներին՝ վճռի անարդարացի լինելու դեմ և հրաժարվում կատարել այն, դատավորները իրավունք չունենին գործը նորից քննելու և փոխելու վճռահատների կայացրած վճիռը, ընդհակառակը, նրանք պետք է ստիպեին, որպեսզի բողոքողը կատարեր իր պարտավորությունը, որովհետև ըստ Դատաստանագրքի, «...ինքն հաճութեամբ և հաւանութեամբ կամաց իւրոց է ընտրեալ զնոսա, պարտի զի լինիցի հնազանդ դատողութեան նոցին...» (մասն Դ, գլ. 14, հոդ. 21):

Աստրախանի հայկական ռատհուզի ֆոնդում եղած նյութերում հանդիպում ենք փաստաթղթերի, որոնք վկայում են, որ Դատաստանագրքի այս պահանջը ևս իրականացվել է: Հաճախ զանազան հարցեր լուծելու համար ռատհուզին դիմելու փոխարեն կողմերը ընտրել են վճռահատներ, որոնք քննել են գործը ու կայացրել վճիռ: Այսպես, օրինակ, հայ վաճառականներ Ի. Թումազևի և Մ. Սաֆարովի միջև եղած վեճը լուծելու համար նրանց համաձայնությամբ գործը հանձնվում է վճռահատներին:

Դատաստանագրքի ամբողջ ոգուց երևում է, որ դատավարությունն ընթացել է բանավոր:

Դատաստանագրքից միաժամանակ երևում է, որ դատավարությունը տեղի է ունեցել դռնփակ: Այդ երևում է առանձին հոդվածներում եղած անուղղակի հիշատակություններից³⁴: Ընդհանրապես Դատաստանագրքի ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ դատավարությունը ընթացել է դռնփակ, իսկ դատավճիռը շատ անգամ ի կատար է ածվել հրապարակորեն:

Աստրախանի Դատաստանագիրքը եղել է գործող օրենսգիրք, նրանով ղեկավարվել են սկզբում Աստրախանի, այնուհետև Ղզլարի և Մոզգոկի հայկական հատուկ դատարանները, ինչպես նաև Նոր-Նախիջևանի հայկական մագիստրատը:

Յ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՇԱՐԱՏԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Վանա լճի ավազանը մի բացառիկ երկրամաս էր, որտեղ անցյալում կար երաշտի դեմ պայքարելու մի հիմնալի դաշտամշակութային եղանակ՝ շարացան սիստեմը: Այս սիստեմի միջոցով մշակվում էին միայն աշենացան ցորենները: Հատիկները խնամքով թաղվելով ափսոսմեք, բավարար սնուցում էին ստանում, սերմի անտեղի կորուստ չէր լինում: Մյուս հատիկն ու բույսը լավ էին զիմանում երաշտին: Նրբ անջրդի շաղացանի ցանքերը երաշտից չորանում էին, շարացանից բավարար բերք էր ստացվում: Շարացան սիստեմը Վանա լճի ավազանում և Կոգովիսում հայտնի էր տիր զենկ (ոմանց մաս՝ զիր զենկ) անունով:

Վանա լճի ավազանի բարրատներում ու խոսվածքներում տիր բառը նշանակում էր ափսոսմեք: «Տիր զենկ» նշանակում էր ծիր Կաշիկ, ափսոսել և ծիր-ափսոսի մեջ ձեռքով ցորեն ցանել, շարացան կատարել: Իսկ Գնունիքում (Թիմար) կար տիր (զիր) անունը կրող կարմրահատ ցորեն:

Ինչպես ցույց են տալիս 1958 թ. մեր գիտական արշավի միջոցին ձեռք բերած նյութերը, տիր զենկու սիստեմը տարածված է եղել Բզնունիքում (Ելաթ)¹, Խորխոռունիքում (Արժկե)²,

³⁴ Դատաստանագիրք (ձեռ. 7383), մասն Բ, գլ. 12, հոդ. 2:

¹ Նյութերը 1958 թ. պատմել է Ելաթի Տափավան գյուղացի, 1885 թ. ծնված, այժմ էլ միամեծ-եղբանի Հայրապետ Մերոբի Հարությունյանը: Նա շինել է տեղի խառնի մոզելը (տե՛ս ՊՊԹ, ազգագրական ֆոնդ, 7446):

² Նյութերը 1958 թ. հաղորդել է Արժկեի Այգեձոր (Էգեձոր) գյուղացի, 1855 թ. ծնված, այժմ էլ միամեծաբանի Հմայակ Մելիքի Սաֆարյանը: Իսկ նույն գավառի Բարկատ գյուղացի-ծերունի Պողոս Պետրոսյանը, որ այժմ ապրում է Աշտարակի Զորափ գյուղում, 1959 թ. մեր պատվերով պատրաստել է Արժկեի բոլոր գյուղատեղատեղան գործիքներն իրենց բնական չափերով, այդ թվում նաև տեղի խառնի կոմպլեքսը: